

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12 ծր.

Վեցամսեայ 6 ծր.

ԱՐՏԱՍՍԱԶՄԱՆ

Երկու քիւր մէկ ծրարով
Տարեկան . . . 14 ծր.

Վեցամսեայ . . . 7 ծր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 ծրար
Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆԽԻԿ

Ծանոցումս օրդր
20 սանթիմ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱՐ

ՀԱՍՑԻ

Reduction du journal

„Irayounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

Ирауунк“

ВАРНА

Գրութունք եւ չեց
տրութիւր

ԶԵԿՈՅ

Կը խնդրուի մեր բաժա-
նորդներէն—մասնաւորապէս Եւ-
գիպտոսի և Ամերիկայի բաժա-
նորդներէն—որ հաճին նկատու-
թեան առնել թէ մեր ներկայ
տարեշրջանին ութերորդ ամսոյն
մէջ կը գտնուինք և ուստի շրջեն
այլևս իրենց յետնեալ բաժնե-
գիրները :

ԶԱՐԻՆ ՈՒՔԱԶԸ

ՎԱՐԻՉ ԾԵՐԱԿՈՅԻՆ ՈՒՂՂՈՒԱԾ

« Վերանորոգելով մեր փո-
խարքայութիւնն ի կողմէս , այս
բարբեր երկրին մէջ հանրա-
յին կեանքի խաղաղ ընթացքը
բարգաւաճեցնելու գործը Մենք
յանձնեցինք կողկասեան Կառա-
վարութեան համար Մեր ընտ-
րած հաւատարիմ անձնաւորու-
թեան :

« Եւ այժմ փոխարքան , իրեն
վստահուած երկրին պայմաննե-
րուն մօտէն ծանօթանալէ ետքը,
Մեզ մատոյց իր թելադրու-
թիւնները՝ փոփոխելու համար
տեղւոյն բնակչութեան Հայ մա-
սին վերաբերող կրթական եւ
հոգեւոր քանի մը կարգադրու-
թիւնները , որոնք կը դժուա-
րացնեն Հայ եկեղեցւոյ զաւակ-
ներուն բարեկարգ ու կանոնա-
ւոր կրթութիւնը :

« Իբրեւ բարիք ճանչնալով վա-
ւերացումը Մեր փոխարքային
սոյն առաջարկութեան , Մենք,
ներկայ Հրամանագրով , Հայ-Լու-
սաւորչական հոգեւորականու-
թեան կը շնորհենք կրթական
ընդարձակ միջոցներ յոգուտ
հանրային զարգացման : Միեւ-
նոյն ժամանակ հրամայելով
ստորեւ յիշուած հիմերու վրայ
վերադարձնել եկեղեցական հաս-
տատութիւններէն գրաւեալ կալ-
ւածները , կը թոյլատրենք Մեր
փոխարքային՝ իր իրաւասութեան
ենթարկեալ երկրին սահմաննե-
րուն մէջ այժմէն իսկ գործադր-
ել իր կանոնները , ժամանակա-
ւորապէս մինչև որ անոնք օրէնս-

դրական կարգով քննուին,—
կանոններ որք պէտք է ապա-
հովեն Հայ թեմականաց մաս-
նակցութիւնն եկեղեցական կալ-
ուածոց մատակարարութեան նը-
կատմամբ , եւ որպէս զի յառա-
ջիկային տեղի չունենան թիւ-
րիմացութիւններ , որք կարող են
ծագիլ ի գործադրութեան եղող
օրէնքներու թերի կէտերուն
պատճառաւ , փոխարքային անկ
է քննութեան առնել այս խըն-
դերը , թէ ի՞նչ յարաբերութիւն
պէտք է ունենան Պետական վար-
չութիւնը Հայ եկեղեցական հաս-
տատութեանց հետ :

« Ըստ այսմ կը հրամայենք .

« Ա. — Փոխելով 1903 թիւի

Թունիս 12-ի Բարձրագոյն Հրա-
մանը (Ուքազ) յանձնել Հայ-Լու-
սաւորչական եկեղեցւոյ պատկանե-
ալ հիմնարկութեանց սեփակա-
նութեան , տիրութեան ու վար-
չութեան՝ Հայ-Լուսաւորչական
եկեղեցիներուն , վանքերուն , հո-
գեւոր հաստատութիւններուն
պատկանող բոլոր անշարժ կալ-
ուածներն ու դրամագլուխները
այն բոլոր եկամուտներով որք
ստացուել են սոյն գոյից ու ըս-
տացուածոց արքունի մատակա-
րարութեան ժամանակ,—ի բաց
առեալ նոյն գոյից ու ստացուա-
ծոց պահպանման համար արդէն
եղած ծախքերը , ինչպէս նաեւ
անոնց յարքունիս ընդունելու-
թեանն [գրաւման] համար ծախ-
սուած գումարները , Սոյն կալ-
ուածներն ու եկամուտներն եկե-
ղեցական հաստատութիւններուն
վերադարձնելու գործը պէտք է
կատարուի Մեր կողկասեան փո-
խարքայի համաձայնութեամբը
ներքին գործոց նախարարին եւ
երկրագործութեան եւ արքունի
կալուածոց նախարարութեան
գլխաւոր կառավարիչին հետ :

« Բ. — Հայ-Լուսաւորչական եկե-
ղեցական կալուածներն ու անոնց
եկամուտները Կառավարութեան
յանձնելու ժամանակ այս հոգե-
ւորականութեան տեղի ունեցած
գիմումներուն ու օրինական
ձեռնարկութիւններուն վերջնա-
կան վճիռները՝ ի մասին կող-

կասի՝ պիտի տայ Մեր կողկաս-
եան փոխարքան :

« Գ. — Մինչև որ Հայ եկեղե-
ցական դպրոցներու մասին նոր
կանոններ քննուին ու ծրագը-
րուին , Մեր փոխարքային թոյլ
կուտանք որ կողկասեան փո-
խարքայութեան սահմաններուն
մէջ թոյլ տրուի եկեղեցիներուն
ու վանքերուն յարակից բանալ
ծխական դպրոցներ , 1874 յու-
նիս 19 Բարձրագոյն հաստատու-
ած կանոններուն հիման վրայ :

« Դ. — Մեր փոխարքային կը

յանձնենք .—

1.—Սահմանուած կարգով ան-
յապաղ դիմում ընել , առանց յա-
րաբերութեան մտնելու պատ-
կանեալ հաստատութեանց հետ
նոր կարգադրութիւնները հը-
րատարակելու համար Հայ եկե-
ղեցական դպրոցներու նկատ-
մամբ , Հայ եկեղեցւոյ վերա-
դարձնելու առթիւ այն անշարժ
կալուածներն ու դրամագլուխ-
ները , որք հանրային կրթու-
թեան նախարարութեան յանձ-
նուել էին նախարարական յան-
ձընախմբին 1898 մարտ 26 ի եւ
1903 յունիս 12 ի որոշումներուն
համեմատ եւ բարձրագոյն հաս-
տատութեամբ :

2.—Պետական Գանձարանի օգ-
նութեամբ քննել եւ հաստա-
տել օրինագիծ վը Հայ եկեղեց-
ւոյ կալուածներուն վրայ բնա-
կող գիւղացիներուն հողային
կազմակերպութեան վերաբերեալ
եւ այս ամէն ծրագիրները սահ-
մանեալ կերպով ներկայացնել
Մեր վաւերացման :

« Այս ամէն տրամադրութեանց
կատարման համար վարիչ Մե-
րակոյտը պէտք է ընէ պարտ
ու պատշաճ կարգադրութիւնը :
Իսկական պատճենին վրայ Ն. Կ.
Վեհափառութեան ձեռնով ստորագր-
ուած է :

ՆԻՔՈՒԱՅ

Բեգերհօֆ

1905 Օգոստոս 1.

(Հ. Տ.)

Վերի կայսերական Ուքազին հը-
րատարակման առթիւ Մշակ հե-

տեւեալ խմբագրականը գրած է .

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՇՆՈՐՀ

Խորին անհամբերութեամբ ակնկա-
լուած Բարձրագոյն Ուկազը հայոց ե-
կեղեցական կալուածներին վերադարձ-
ման եւ հայոց եկեղեցական-ծխական
դպրոցների վերաբացման մասին հը-
րատարակվեց :

Այդ Ուկազը ցնծութեամբ , հաւատով
յոյսով պէտք է լցնի հայերի սիրտը
Ձեռք սխալվի եթէ ասենք , որ այ-
սօր , առաջին անգամ , տաանեակ տարի-
ներից ի վեր , հայի մթափնված , կնճ-
ռըված , թախծալի դէմքը պէտք է
պարզվի , պէտք է փայլի անկեղծ
ուրախութեամբ , որովհետեւ կայսե-
րական Գահի բարձրութիւնից մի ան-
գամ եւս թնդաց այն ձայնը , որով
յաճախ , հայ ժողովրդի բազմաչար-
չար եւ տառապեալ կեանքի ընթաց-
քով , Ռուսաց մեծագոր Վեհապետնե-
րը դիմել են հայ ազգին եւ վըս-
տահացել նրան իրանց հայրական
խնամքի ու կայսերական շնորհնե-
րի մասին : Այդ նշանաւոր Ուկա-
զով , որ ջնջում է այն քան յուզ-
մունքների պատճառ դարձած 1903
թւի կանոնադրութիւնը , Թագաւոր
կայսր աւետում է բովանդակ հայ
ազգին եւ եկեղեցւոյն , որ հայոց
հոգեւորականութեան հնարաւորութիւն
եւ միջոց է տրվում ունենալ լայն
լուսաւորական գործունէութիւն յո-
գուտ հայ ժողովրդի :

Ուրախութիւնը , որ զգաց հայ ժո-
ղովրդը , երբ դեռ ծանօթ չէր
կայսերական Ուկազի բովանդակու-
թեան հետ , այսօր երբ Ուկազը հը-
րատարակված է , տաանապառիկ պէտք
է լինի , հարկւրապատիկ , որովհե-
տեւ նա իրականացնում է հայ ազ-
գի բազմալի ակնկալութիւնը , որով-
հետեւ նա վերադարձնում է հայ
ժողովրդին այն վստահութիւնը , օ-
րից նա զրկված էր վերջերս եւ
ներշնչում է նրան նոր յոյս , կեն-
դանի հաւատ , որ այսուհետեւ նա
կարող է եռանդով , թափով անձ-
նատուր լինել խաղաղ կուլտուրա-
կան զարգացման , ունենալ իր ազ-
գային-եկեղեցական կրթական հաս-
տատութիւնները :

Բայց Բարձրագոյն Ուկազը մանա-
ւանդ նշանաւոր է նրանով , որ
վերահաստատում է հայոց եկեղեցու
մի դարեւոր իրաւունքը , այն է ծը-
խական ժողովրդի իրաւունքը՝ մաս-
նակցելու իր եկեղեցու գործերին
եւ նրա գոյքերի կառավարութեան :
Հայոց եկեղեցու ինքնավարական սկզ-
բունքը աւելի եւս խմբապնդում է
կայսերական նոր Ուկազով , որ վե-
րահաստատում է 1836 թւի պոլո-

ժենիայի սկզբունքները : Միւս կողմից թոյլատրելով բանալ հայոց զբաղւոյնները 1874 թւին հաստատված կանոններով, կայսերական Ուկրաինայի միջոց է տալիս հայ ժողովրդին ունենալ իր եկեղեցիներին կից ծխական տարրական եւ երկրորդական դպրոցներ, հանրակրթական ուղղութեամբ :

Կրկնում ենք, կայսերական շնորհի այս նոր ապացոյցները անհուն բերկրութեամբ պէտք է լցնեն հայկական արտերը եւ բոլոր հայերը, հետեւելով իրանց ծերունի Հայրապետի հրաւերին, վաղը, կերակրել, բոլոր եկեղեցիներում, պէտք է ջերմութեամբ աղօթքներ անեն կայսր Նիկոլայ Բ ի արեւաշատտեմեան համար, որ վերադարձրեց հայ ազգին եւ եկեղեցուն իր դարեւոր սեփականութեամբ, եւ որ գլխաւորն է, իրաւունքը համայնօրէն տնօրէնել իր եկեղեցական գործերը եւ վարել իր կրթական պահանջները :

Կայսերական Ուկրաինայ, մեզ հայերիս համար սկսվում է ինքնագործունէութեան մի նոր շրջան, որի համար պէտք է լարենք մեր բոլոր կուլտուրական ոյժերը մտածմունքները :

Դէպի գործ ուրեմն, հաւատով, յոյսով եւ վստահութեամբ :

ԲՈՒԴԴԱՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ

(Շար. նախորդ թիւէն եւ վերջ)

Դ.

Բուդդայական լուսամտութիւնն ունեն, աներկիւղ իրենց կրօնին մէջ ներմուծելու ինչ որ լաւ կերեւի իրենց :

Շատեր այնպէս գաղափար կաղմած են թէ, Բուդդայականներուն դիւրաւ կարելի է հաւատափոխ առնել, մինչդեռ ընդհակառակն կորովի ընդդիմադրութեամբ մը կը հակառակին գրեթէ հաւատափոխ ընելու ջանացող քարոզիչներուն : Երբ Անգլիացի կղերները անոնց կըսէին, մարդիկ պարտաւոր են մարդոց սէր քարոզող, ինչպէս նաեւ թշնամիները սիրել առաջարկող կրօնն ընդունել, շատ իրաւամբ կը պատասխանէին անոնց : «Ինչպէս ներել պարտինք մեր թշնամիներուն երբ մեր երկիրները կ'ապստաղենուի Դուք ձեր թշնամիներուն երբէք չէք ներեր, խաղաղութեան անունով կը խօսիք ու պատերազմի թմբուկ կը հնչեցընէք : Ձեր խաղաղական պահանջկոտ շեշտերն կ'արձագանքեն որպէս թնդանօթի եւ զօրութեան ձայներ : Ժողովուրդին կը քարոզէք, բայց Ձեր կրօնի ներկայացուցիչներն առատութեան մէջ կը յղփանան Աստուածային պաշտօն մատուցած ատեննիդ ջանք ու մոմեր կը վառէք, իրենք թէ աստուածնիդ խաւարի եւ մթութեան մէջ քնակած լինէր Գնացէք ձեր տեղերը եւ քարոզեցէք ձեր հայրենակիցներուն անդորրութիւն, պարկեշտութիւն եւ չափաւորութիւն : Հաւատափոխութեան հետապնդող քրիստոնեայ քարոզիչներուն վրայ արգահատելով կըսեն, « կրօնամոլութիւնը փորձութեան մասնաւոր ապացոյցն է : Խելացի եւ գիտուն մարդը ո՛չ ոք չը հալածեր կրօնական դադափարներու համար : »

Ե.

Բուդդայի տիեզերաբանութիւնը կուսուցանէ ճիշդ արդի գիտութեան պէս, այսինքն իրերը իրենց ծագումը առած են մէկ նախնական անվերջ եւ անհունօրէն անգայտացած նիւթէ մը, որմէ աշխարհներ կ'զմակերպուած են հետզհետէ խտացման օրէնքի համաձայն, այս աշխարհները բաւական ատեն վերջ կը քայքային ու կը ցնդին, վերստին նոր կազմութիւններու աճեցմանը տեղի տալու համար, եւ այսպէս շարունակաբար :

Տիեզերքի կազմակերպութիւնը անըմբռնելի կարեք մը յագորդէն է, որ կապացուցուի տիեզերքի օրէնք նկատուած պատճառի եւ արդիւնքի միջնորդութեամբ : Աշխարհները կը յաջորդեն մէկկմէկու եւ կը կատարելագործուին հետզհետէ, այսպէս նաեւ բոլոր գործարանաւոր էակները, որոնց ամէնն ալ կը վերադառնան մինչեւ իրենց նախնական վիճակին՝ բացարձակ անդորրութեան եւ փրկութեան մէջ, Նիրվանայի ծոցը այսինքն յոյնութիւն :

Բացի ասկէ, Բուդդան կը յայտարարէր խորհելու ամենաբացարձակ ազատութեան սկզբունքը, եւ ուրիշներուն կարծիքներուն հանդէպ ներդաշնակութեամբ վերաբերուի. եւ կը նկատէր ասոնց հակառակորդները իբր ստորնագոյն գիտակցութեան մարմնացումներ :

Թարգմ.

ՋԱՐԵՀ

7 Օգոստոս 1905

ՏԵՂԱԿԱՆ ՆՈՐ ԶԱՌՈՂՈՒՄԾ

Դպրոցական քննութիւններու, պարգեւաբաշխումներու եւ հանգէսներու սովորական կատարումէն վերջ կ'սկսի մեծագոյն գործը՝ Ուսուցիչներու նոր ընտրութիւնը յառաջիկայ տարւոյ դպրոցական գործառնութիւնը ապահովելու համար, ի հարկէ փորձառութեամբ խղճմտաբար եւ անաչաւօրէն կատարուած ընտրութիւնն է որ ազգային մանկըտոյն ապագան եւ ճակատագիրը վճռելու բնութիւնն պիտի ունենայ, որուն յուսալից կըսպասէ ամեն մարդ՝ երբ ունի գիտակցութիւնը դպրոցին կատարած եւ կատարելի դերին :

Վառնա եւ իւր կարգին սկսած է ընտրական գործողութեան, Մենք սոյն ընդհանուր ընտրութեան միայն մէկ հատին վերայ է որ պիտի խօսինք :

Տեղւոյս Ազգ. Վարժարանաց Պատ. Հոգաբարձութիւնը՝ կը լըսենք թէ՛, Դպրոցի տեսչական ընտրութեան մէջ այս տարի ալ նորէն նախորդ տարւան ձախող գահավիժումը ունեցած է. ընտրելով մի այնպիսի տեսչ՝ որ անցեալ տարի բազմադէպ պարագաներու մէջ գործնական ապագան հաստատեց իւր վարչական անկարողութիւնը, որոյ քաւութեան նոխալն եղան Տեւ

դացի հայ մանուկն եւ ազգ. պրնտուկն :

Աւելորդ է մեզ համար մանրամասնել անցեալ տարւան տըխուր միջադէպերը վարժապետական անլսելի կռիւներ, սրտամաշ ժողովներ, վաղաժամ հրաժարումներ ի շարս որոնց կը գտնուէր անկարող տեսուչը. եւայլն եւայլն :

Մենք եւ մեզ հետ շատեր բնականաբար իրաւունք ունինք հարցնել այս օր Պատ. Հոգաբարձութեան ինչու այդչափ շուտ մոռացկոտ կը լինիք. ու նորէն ընտրեցիք տեսուչ մը, յորմէ ազգը այնչափ դժգոհ մնաց անցեալ տարի, ինչպէս նաեւ դուք եւ յիշեալին հետ պաշտօնավարող ուսուցիչները :

Ինչու վերընտրուեցաւ փորձով ապացուցուած անկարող ճանչցուած մի տեսուչ, երբ անդին մէկէ աւելի կարող քանտիտաներ կային :

Ինչու վերընտրուեցաւ գործնականապէս ապարդիւն հռչակուած մէկը աւելի մեծ ուժիկով՝ մինչ անդին կային աւելի յուսատու պաշտօնեաներ նուազագոյն վճարումով ծառայելու պատրաստ : Մանաւանդ երբ Հոգաբարձութիւնը ինքը բարձր բաձայն կը յայտարարէր իւր նիւթականի անձկութիւնը :

Ինչու վերընտրուեցաւ այնպիսի մէկը որ բացարձակապէս կը յայտարարէ թէ՛ « Ես ո՛չ ուսուցչական ժողով կը ճանչնամ եւ ո՛չ հոգաբարձութիւն, իմ կամքս, գիտակցութիւնս ինձ համար անքննելի օրէնք են : » (սիք) ?

Հոգաբարձութիւնը կը կարծենք գիտնալ թէ քիչ թէ շատ տեղական կրթական օրէնքին ծանօթ լինելու է, որ կը տրամադրէ «կառավարել ուսուցչական լի մտածումներով վարժարանաց զեկը կը յանձնէ անձի մը՝ որ այդ օրէնքները առաջնորդ կառնէ եւ չընդունիր, զայն ալ կանխաւ յայտարարելով հանդերձ :

ԱՐԻՍՏՈՒՄ

ԴԻՏ. ԽՄԲ. — Անկողմնակալութիւնը պարտք կը զնէ մեր վրայ նոյնութեամբ հրատարակել այս յօդուածը, որուն պարունակութիւնը վառնայի հայ հասարակութեան մէկ մասին կարծիքին կը համապատասխանէ. բայց պէտք է անմիջապէս աւելցնել թէ այդ կարծիքը սխալ տեղեկութեանց վրայ հիմնուած է : Նախորդ տարւան Տնօրէնը անկարող մէկը չէր, եւ շատ ալ անձնուէր ու լավառ աշխատող մըն էր, բայց ուսուցիչներէ մէկ քանինը իրեն անհամբաւել գտնուելով, իր զէմ այն տեսակ դժուարութիւններ հանցին ուսուցչական ժողովներու մէջ որ այլեւս անկարելի դարձաւ նիւստերը շարունակել. եւ Տնօրէնը

հրաժարեցաւ զինք հասկնալ չուզող մէկ քանի ուսուցիչներու հետ գործ չունենալու համար :

Հոգաբարձութիւնը եւս անցեալ տարեկանի երկրորդ կէսին մէջ փորձառար տեսնելով թէ միեւնոյն ուսուցչական խումբով չէ կարելի վարժարանը արդիւնաւոր ընել, ստիպուեցաւ նոր տարեկանին համար գրեթէ բոլորովին նոր ուսուցչական խումբ մը կազմել եւ գրծուած կանոնադրին համեմատ վարել գործը : Ուստի տեղական օրէնքին համաձայն աւագ ուսուցչի պաշտօնին հրաւերեց անցեալ տարւան տընօրէնը. որ սակայն, նախորդ տարւան ուսուցիչներու փորձէն խրատուած, առաջարկեց որ վարժարանը իր բացարձակ անօրէնութեան յանձնուի :

Այժմ պիտի քննուի թէ անոր այս առաջարկը երկրին օրէնքին եւ ժամանակի ոգւոյն համապատասխան է :

ԱՐԱՐ ԱՊՍԱՄԲՈՒԹԻՒՆԸ

Գանի ժամանակէ ի վեր ցնցող լուր մը եկած է տակ ու վրայ ընելու Օսմանեան կայսրութիւնը. որ եւրոպական նահանգներուն մէջ արդէն անհաստատ շատ հաստատուն չի երեւնար Փոքր Ասիոյ մէջ ալ, որ որորանն եղած է իր ծագման ու զօրութեան, զոր ի գործ դրաւ երկար ժամանակ Եւրոպիոյ եւ Ասիոյ միջեւ :

Մինչեւ ցարդ Թուրքերը իրենց ոյժն ու զօրութիւնը կը պարտէին Սրբաբնութեան, զորո նուաճած էին եւ որոնք կը կազմէին իրենց բանակներուն գլխաւոր ոյժը :

Բայց այս քաջարի ցեղը իր նահապետական, հերքելիալ եւ ասպետական բարբոյ, բաւական կրեց օսմանեան օտարաբն տիրապետութիւնը, եւ ապստամբութիւնը որ շատ տարիներէ ի վեր լուրի բայց յարատեւ կերպով կը մշակուէր, այսօր իր բոլոր սաստկութեամբ կը տիրէ խալիֆաներու հին երկիրներուն՝ Դամասկոսի եւ Պաղատի մէջ :

Թուրքերէն ճնշուած կոփուած ու հարստահարուած Արաբները հասկըցան թէ այլ եւս ժամանակը եկած հասած է վերջ տալու համարական կեղեքումներուն, եւ ճշմարտապէս հայրենասիրական թափով մը օտքի կանգնեցան, ի նպաստ ազգային շարժման, որ կոչուած է ծնունդ տալու արաբական մեծ հայրենիքի մը, այն կայսրութեան միացող աւերակներուն վրայ, որ թէեւ շատ հաստատուն չեղաւ, բայց շատ շփոթութեամբ փայլեցաւ մի քանի դարեր : Յիմնաւոր թէեւ չի կրնար չափէն աւելի քաջալերել այս շարժումը, բայց պէտք է իր բոլոր համակրութիւնը նուիրէ անոր : Այն պարագային երբ թրքական պարտութիւն մը արաբական անկախ դաշնակցութիւն մը ստեղծէ Յիմնաւոր պիտի գտնէ հոն անհուն առաւելութիւն մը ու ճոխ ճամբաներ իր վաճառականութեան համար եւ շատ տեսակ ապրանքներ ընկի արտադրութիւն : Շատ դարերէ ի վեր այս տեղի քնակիչներուն ծանօթ է Յիմնաւոր անունը, որ հիմակ ալ ակնածելի կընէ մեր ազգային ազդեցութիւնը իր բանաստեղծ ընկերներուն, որոնք խղիւղութեան կրօնամով Տիւրքիւններն :

Երբ Ասորիքը, Պաղեստինը, Միջագետքը եւ Լիւանիոն թոյնաբեր խոր-քանի մէջ պիտի վերածնի յոյսն ազատութեան, որուն արդէն կը սպասէ անձկալից ։

Արաբական երկիրներուն անկախութիւնը Թուրքիոյ կատարեալ տըկարացումն ըսել է . հարուածը պիտի տրուի եւ ալ չպիտի վերականգնի ։ Իր բանակը կէսէն աւելի պիտի նուազի եւ Սուլթանի գանձը պիտի դատարկի չկրնալով այլ եւս դէմ կենալ պաշտօնէից շարունակական վատնումներուն ։

Եւրոպիոյ մէջ մակեդոնական ապստամբութիւնը չիջած ըլլալէ շատ հետեւ է . եւ Պուլկարիան, Սերպիան եւ Մոնթենեգրոն վայրկեանը եկածին պէս պիտի միանան, ինչպէս, որ իւրենց հասարակաց շահը կը պահանջէ ։ Այն ատեն Դուռը պիտի բռնադատուի պարպել թրքո-ռուս սահմանադրութիւնը, վարարար փերուս վրայ գործելու համար ։ Այսպէս կայսրութեան երկու ծայրերուն մէջ պիտի ոգորի ապստամբող ժողովուրդներուն հետ ։

Այդ օրը, պիտի հնչէ թաղման զանգալը համբաւական վարչութեան ։

ՕԿԻՍԻՄԻ ՊԵՆԱՌ

Թ Ա Տ Ե Ր Ա Կ Ա Ն

ԿՕՇԻԿԷՆ ՎԵՐ

Պատահական կամ դիպուածական որ եւ է պարագայի մը տակ չէր որ, Շարժում 735 ըդ թիւը կարդացի, ինչպէս նաեւ պ. Ֆոնտիկել ձեր յորածը՝ որ ձեր խելագտուկին տհաս ու խակ արգասիքներուն անճշակելի թիւուածութեամբ թխած էիք, այլ ըստ իմ սովորութեանս, քանի որ ինձի հումար թերթերը կարդալու անոնցմով հետաքրքրուելի այնքան պարզ ու սովորական է որքան ձեզ համար հաշուադէպ ու անսովոր ։

Քառապատիկ աւելի արգահատելի ու ողբալի է ձեր վեճակը առաջիններէն, երբ՝ բոլորովին անզուսպ ձգտումով մը սրճարան կը նետուիք նարտ կամ «Սանդառ» խաղալու մարմարէն պապական, ու հոն խաղակիցի մը չգայութենէն հարկադրուած, մեքենաբար ձեռք կառնէք որ եւ է թերթ մը, անոր սրենակներուն երկայնքն ու լայնքը աչքով չափըքիւնու համար, առանց իսկ կարդացածներ հասկանալու պատրաստուելու համար «գոնէ ունեցած» մտային կարողութիւնները ամփոփելու ։

Պարոն ձեր ծեծուած կատուի պէս ամենուն երեսին նետուելու, ճանկըտելու ու ամեն ինչ տապալելու անսահման ձգտումէն կ'եզրակացնեմ թէ այսօր շատ լաւ խաղացող մը եւ նոյն իսկ յաղթողը պիտի ըլլալիք . սակայն դժբաղդաբար մէկը չգտնալէ վերջ ամենէն ցաւալին սա է որ՝ «Իրաւունք» թերթն է որ ձեռքըդ անցած է . թերթ մը որ՝ ըսէ «կարեւոր» դատած ու փնտած խորագրերներէդ բոլորովին զերծ է ։ Խորագրերն որոնց վերտառութիւնն տակ ամբողջ սրենակներ, անտեղիորէն իրարու անուն մոտեցնել, անմեղներու անունն շուրջը շարահիւս ինքնօրէն եղելութիւններ բոլորել, իրարու զոգ, աւազակ, լակոտ, հաճորդի եւ այլն փոխառացութիւնը ընել, եւ

ամենէն զաղրելին ու պոգալին իրարու անբարոյօրէն հոյսապալու տանքներ ու հայհոյանքներ հասցընելէ զատ ուրիշ ոչինչ չկայ ։

Պարոն, կարծեմ թէ ձեր պոթ-կալու աստիճան լեցուն վէճի մարմար մասամբ յաջեցնելու բաւական միջոց մը կրցայ ըլլալ ։ Այո՛, ձեր քիմքին մօտ, ձեր փնտածին պէս կտոր մը, բայց դժբաղդաբար բոլորովին զերծ ձեր բառարանի բովանդակութենէն, ու շատ տարբեր ձեզ մինչեւ այսօր Պատուարժան խմբագրերնու կողմէ հրաժարուած անհեթեթութիւններէն ։ Ինչ որ ալ ըլլալը գործը վիճելու նիւթ կար ուստի, տեղի կամ անտեղի, գիտցած, կամ չգիտցած, խելքի ահագին ամբարումով մը հրապարակ նետուեցաք, առանց նկատի ունենալու ձեր ձեռնարկած գործին ձեզմէ ունեցած անբաղդատելիօրէն վիթխարիութիւնը, Դո՛ւք, որ՝ ձեզի համար գրական ասպարէզի վրայ միջակութիւն ըսելը անգամ Այն հայհոյելու չափ մեծ մեղք է ։ Դո՛ւք, որ՝ գրականաբար մէք տակաւին եւ հայերէն չգիտնալու չափ խեղճ ու կրակ, ինչ որ քիչ վերջը իւր կարգին ձեր մերկապարանոց տղիտութիւններն թուած պարտքային պիտի փաստեմ ։

Պարոն, երբ դերասանի մը համար, Օթէլլօ՛ կամ ուրիշ որ եւ է դեր մը չկրնար խաղալ, անաչառ ու անկողմնակալ քննադատութեամբ մը անոր կիմացնեն . մի կարծե՛ր թէ զայն վարի աստիճանի դերասան լըստ ըսէ բացատրութեանդ ներկայացնել է ժողովրդին, այլ՝ իւր եղած բարձրութեանը վրայ զայն հաստատ պահելու միջոցն է ։ Որովհետեւ ամեն դերասան իրեն յատուկ ու իրեն յարմար դերերը ունի որոնց մէջ կրնայ փառաւորուել ու պանծալ զանոնք կատարեալ յաջողութեամբ բեմ բերելով ։

Եւ ո՛ր խելացի Դաւիթը ըսու ձեզի թէ դերասան մը պրոֆեսիոնալէտ կամ դերասան ըլլալու համար անպատեճառ Օթէլլօ կարենալ խաղալու պարտաւորուած է ։ Ահաւասիկ հանելի սխալ մը, որ նոյն իսկ Պուլկարիայ թատրոնի մեծ ու պղծ տիկ դերասաններուն ամենուն ալ հաստատ համոզումը եղած է . ու ամենուն ալ միակ փափաքն Օթէլլօ խաղալ պարզապէս դերասան մը կոչուելու իրաւունքը ստանձնելու համար ։

Այս ծիծաղելի սխալը Պարոն դուք ալ չպիտի գործէիք եթէ կովկասեան եւ Ֆոնտիկելի թերթեր կարդալու բարի սովորութիւնը ունենայիք այն ատեն հոն պիտի հանդիպէիք, մեր հայ թատրոնին ու բեմին լեռնուածուհի Տ Սիրանուշ Համլէթ խաղացած ըլլալուն համար գրուած այն բարկ ու լծու քննադատութեան որուն բառերու ծանրութիւնը մարդը չնչապառ կ'ընկճէ, սակայն չատորոնացնէք այլ կը սրբազրէ զայն ։ Եւ ապացոյց ըլլալու համար, քրոնիկագիր ու ժողովուրդ վտահօրէն հաւատալով հանդերձ թէ Տ. Սիրանուշ անկարող է Համլէթ ներկայացնել, դարձեալ անոր վրայ ունեցած հայ եզրական քաջ արուեստագիտութիւնի ու տպաւորութիւնը մաքի չափ փոխուած չէ, եւ պէտք եղածէն աւելի ալ յարգանք կը վայելէ անոնցմէ . ահաւասիկ բան մը որ իւր նախորդն ալ ունեցած է Ֆոնտիկայի մէջ . Տ. Սարայ Պիանար տիեզերահնչակ արուեստագիտութիւն ալ միեւնոյն ձեւով քրոն-

նագատուած է միեւնոյն դերին համար . սակայն եւ այնպէս Բարիզ ու ամբողջ աշխարհ կը հիանայ անոր տաղանդին վրայ ։

Գալով այն կէտին որ կարգալով շատ ցաւեր ու թքնել էք ուղեր յողուածին վրայ զիս երբեք չհետաքրքրեք ։

Պարոն, կարծեմ սա ճշմարիտ է թէ ամէն մարդ իւր տրամաբանելու ձեւն ու եղանակը ունի, ուստի՝ թէ եւ կրնայ ձեր տրամաբանութեամբ սխալ ըլլալ, բայց՝ եթէ իմ տրամաբանութեանս ձգուէր պիտի ըսէի թէ՝ «մարդ ճշմարտութիւն մը պարզած պահուն երբեք ամէնալու պէտքը չունի»—եւ անոր համար էր որ առանց ամէնալու ելայ ըսի ու ահա դարձեալ բարձրաձայն կը կրկնեմ թէ «պ. Պապեան պ. Շաւարշէն տանեալ մը անգամ աւելի լաւ խաղաց Օթէլլօն, եւ պ. Շաւարշ Օթէլլօ խաղալու համար ոչ մի յատկութիւն չունի»—ասիկա Շաւարշը դերասան չէ ըսել չէ ։

Նաեւ շատ կը ցաւիմ որ պարոն, կամ ձեզ պ. Պապեանին Օթէլլօն պատմող մանրամասնօրէն պատմած չէ եւ կամ դուք կերեւայ թէ երկու Օթէլլօներուն գիշերներն քնատ կամ մտազբաղ ըլլալով Պապեան եւ Շաւարշ իրար կը խառնէք կոր, իսկ ես հիմա երկուքին ալ հանդիսատես, ձեզ կը բացատրեմ թէ ինչ էր տարբերութիւնը եւ ուր էր որ դուք կը սխալիք ։

Նախ ձիւրք. ըսած էիք, Կրնայ պ. Շաւարշ շատ լաւ ձիւրքերով օժտուած դերասան մըլլալ, բայց ոչ Օթէլլօ եւ ոչ ալ Օթէլլօ ներկայացնելու կարող մարդ ։

Երկրորդ դիմք ։ Իրաւ է որ դէմքի նուրբ կանոնաւորութիւն մը ունի ներողամիտ աչքերու համար . բան մը որ բաւական նպաստաւոր է իրեն քառքերը եղող սիրահարական դերերու համար, եւ եթէ չեմ սխալի իւր Ռէթերթուարը պէտք է անոնցմէ պատրաստուած ըլլայ եւ ոչ թէ Շէքսպիրեան Օթէլլօներէ, ինչպէս ինք ըսած է սրճարաններու մէջ եւ Պեսետայի դերասաններէն մէկուն բերանը մէկ կանգուն բաց թողած է «ե՛ս, ե՛ս» ըսելով երբ իրեն կը հարցուէր թէ ձեր խումբին մէջ Օթէլլօն ով կը խաղայ բան մը որ ինք շատ լաւ կը յիշէ ինչպէս ուրիշներ ։

Գալով պ. Պապեանին դէմքին, անոր դէմքն ալ իր կանոնաւոր դիմադրութիւնը ունի արուեստագէտի լայն ու բարձր ճակատին տակ, նամանակահոգ պ. Պապեանին, Օթէլլօ խաղացած գիշերները, ընդհանրապէս դէմքը պ. պ. Նշան եւ Թալման երկու երիտասարդ պատկերահաններու մասնաւոր խնամքով կը գծագրուէր, ինչպէս նաեւ սափրիչ մալ մազերը, որպէսզի հէլլէն քահանայի մը թընչութիւնը պէս ուսերն ի վար չը ձգուին ։

Երրորդ ճեպ, Տեաքի համար իմ կողմէն դէրօ քը պ. Շաւարշին, քանի որ Տէգլաճման Տ. Քալիքաճեանը եւ դերակատարներն ալ գաճաճներ չեն ։

Չորրորդ . ձայնի գոռոն գոչուի անուշաբիւն ։ Նախ թէ Օթէլլօն պէս Մաւրիտանացիի մը համար ձայնի նրբութեան եւ անուշութեան երբեք պէտքը չկար ։ Երկրորդ գալով գոռում գոչումին, բան մէ որ պ. Շաւարշին քով ոչ թէ կը պակսի, այլ անոր նմանող բան մը իսկ գոյութիւն չունի անոր քով, Պարոն կերեւայ

թէ դուք զայն դարձեալ պ. Պապեանին քով տեսած ըլլալու էք, եւ կամ խոստովանեցէք թէ պ. Շաւարշէն զատ Օթէլլօ խաղացող չէք տեսած ։

Եւ ահա հոս է որ հայերէն բառերուն իմաստը չգիտնալիդ կապացուցանէք, քանի որ պարզ կանացի նրբութեամբ լացող, ճուացող ձայնի մը գոռում գոչում անունը կուտաք հապա առնական օւժեղ յուրճէ մը ժայթքող թաւ ու խորխոր ձայնի պոռչուցին ինչ անուն պիտի տանք, —այն ատեն կամ ձեր բառարանին կը գիմենք եւ կամ որոտում, պայթում կամ դնդին կը գրենք — ։

Պարոն ես ալ համախոհ եմ, ձեզի եւ ձեզ հետ ես ալ պիտի ըսէի թէ պ. Շաւարշին պէս պուլկարայի դերասան շատ քիչ կայ, եթէ պահ մը մերկանալով իւր անձնապատանուածութենէն, իրեն զէմ եղած անկողմնակալ քննադատութեանց դէմ փոխանակ ձեզ պէս խեղճ ու կրակներով զինուելու սրբազրուիլ աշխատէր, ու վերջէն խօսակցութեանը մէջէն իւր թերթի եղանակը նա մանաւանդ այդ փորձի ու հակափորձի ալիքներէն նաեւ մը նման անհաճոյ տարուբերում մը ։

Նաեւ շատ լաւ ու շատ մեծ խելացութիւն էք ըրած, իմ նախնաճոտ ու անիմաստ գրութեանս աւելի մանրամասն պատասխանել չը փորձուելով, որովհետեւ եթէ ձեր այս վերտ ու անգոր քայլերով աւելի յառաջանայիք յիշակը կարեկցութեան արժանի կըլլայիք ։

Անհուն ու բիւր շնորհակալիք ու երախտիք ձեր ինձ տուած խորհուրդներուն փոխան ։

Իսկ, դուք ալ իմ կողմէն ընդունեցէք հոգեպէս ցաւած սրտի մը անկեղծ արտօսները փոխան ձեր ինքնածին Թատերասեր ամբոխին քահաներէն հիւսուած հեշտօրօր անուրջին ձեր այդ անբացատրելի տկար, վտիտ ու անհամ գրչակիկին տարտամ խորխորներուն առթիւ ։

Միայն պարոն, ուրիշ անգամ նախ չափեցէք ձեռնարկիդ, ճանչցէք դիմացներդ ու ապա կոչիկէն վեր ալ մի ելլաք ։

Գալով վերջի հատուածիդ ես ալ զայն շատ պիտի աղայէի մեր մի քանի խմբագրիներուն բայց մօտիկ ընողը ո՛վ ։

Սօֆիայի

ՌՈՒՍԻՈՅ ՄԷՋ ՎԱՐՃԱՐԱՆՆԵՐԸ

ԱՆԿԱԼԻ ԵՒ ԱՁԱՏ

Ժողովրդական լուսաւորութեան միջնորդութիւնը մշակել է մի մեծ ծրագիր ազատ դպրոցների համար ։ Այն նախագիծը առաջարկում է թէ միջնակարգ եւ թէ ստորին ամեն տեսակ դպրոցներ թոյլ տալ ազատ բաց անելու ամէն մի անձի եւ հիմնարկութեան . առաջարկվում է նոյնպէս ծրագրել եւ առարկաները ուսուցման լեզուն բոլորովին ազատ թողնել, նոյնպէս ազատ թողնել եւ դպրոցի ուսումնական եւ վարչական մասի ծրագրերը ։ Ամեն մի անձ եւ հասարակական հիմնարկութիւն իրաւունք ունի բաց անել իր ցանկացած ուսումնական, հաստատութեան ներկայացնելով իր ազատ մշակած դպրոցական ծրագիրը ։ Այդ ծրագրերն ու կանոնադրութիւնները պէտք է հաստատվեն, եթէ նրանցում չը

կայ ոչ մի բան երկրի ընդհանուր օրենքներին դեմ: Ճիշդ այդպէս էլ պէտք է ազատ թողնել առարկաների անհրաժեշտ լեզուն: Պարտադիր է լինելու միայն ռուսաց լեզուի, ուսումը պատմութեան եւ աշխարհագրութեան դաստուրութեանը: այդ 3 առարկաներն ալ պէտք է ուսնեմըն լեզուով աւանդվեն: Այդ ազատ դրույրոցն են աւարտողները համապատասխան իրաւունքներ ու արտօնութիւններ ձեռք կը բերեն միայն այն դէպքում, երբ դպրոցը իր կանոնադրութիւնով ստացել է այդ իրաւունքը կամ երբ այդ իրաւունքը չունեցող դպրոցներն աւարտողները քննութիւն կը տան պետական դպրոցներում:

ՄԾԱԿ

ՀԱՎԱՏՈՒՄԱԹ

ԹԻԻՐԻԻԱ

«Աժան» Պաշկար» ամսագրի թէկնարակը ներքին իրմիջ տիր:

ՍԹԱՆՊՈԼ, 12 օգոստ.

Տրապիզոն իշխան Երմուզ սէրայընտան հաւատարմէր իշխան իրիւր: Օրատա երմէնիւնէր ազաւ նամազընտա իրի պէօյիւկ ճամիլէրի հաւալա ամիւրջար 100 քիշի գատար էօլմիւլէր: Երմէնիւնէր վէ Բոււլարա գարը զըրկըն պաշկարը տըր:

«Բեզա սէրայտան շայի պուլտըղը իւզըն, օլ անարշիւթ էրմէնիւնէրին մագսէտինի բօլիսիանլապալիւմիշ, եանի օնլար սեպտեմբեր 1 տէ իճրա իթմէք իշխան պիր գօմբլօ հազըրլաւմըշար: Էլտէ իտիւնէն էվրագլարտան անլաշըրտըղընա նազարէն, Տիւլանը Ումումիլէ տաիւրէսինին վէ իքի ճամիլէրին անլթընտա լաղըլլար աշմըշար: Բօլիսիա սըզը թէտպիրլէր էլէ պլմը տըր:

«Տիւրքմաթ տաիւրէրինտէ ինանըլմայօր քի օ՛ գատար ճէսիմ պինալար անլթընտա լաղըլլար աշմըշ օլտուլար: պուլպըր պիր իշ օլուպ իճրասը լէք միւլքիւլ տիր: Խրիսթիանլարը գըրմայա սէպէպ ինտաս իթմէք իշխան թիւրքլէր մախսուս օ՛ եօլտա լաղըլլար աշմըշար տէյիւ զանն ու շիւբնէ օլընըյօր:

«Թիւրքլէր էճնէպի թապաալարը տախի թէհտիտ իթմէկէ տէվամ իտէյօրլար:

«Մէսաթէր Մարիթիմ շիրքէթին էգոռաթօյ նամ վաթօրը գօրտօն անլթընա անլընարագ, եօլըլլարըն տըշարը չըգմաթընա միւսաաէ վէրիւմէյօր: Իշպու թէտպիր հէր պիր վաթօր իշխան տէվամ օլընաճագ տըր:»

—Սթանպօլտան անլընա թէլէկրաթլարտան վէ խուսուսի մէքթուպլարտան մաէթթէսիւֆ անլաշըրտըղը իւզըն, Ղալաթատա Բիւլիւկ Սիլլէթ խանը գա-

բուսընտա ճուճա էրթէսի սապահը [13 օգոստ.] պիր էրմէնի պըշագ տարպէլէրի իլէ Աբիկ էֆօ Ունճեանը գաթլ իթմիշ տիր: Գաթլ տէրտէսթ օլընմըշ, յեղաիոնական ըմըշ, Բէվայէթէ կէօրէ Գոմիթէ Աբիկ էֆէնտիտէն 50 լիւրա իսթէյուպ ալաւաւըղը իշխան պու ճիւնայէթէ գարար գըլմըշ: Պագաթ պիզ խալիս պիր էրմէնի գօմիթէսինտէն պու տէրէճէ ալաշարգ մէմուլ իթմէյիգ, զիրա Ունճեան եիւլլէրճէ 50 լիւրալար քէնտի հիւնի իրիւաւը իլէ միլլէթէ ֆէտա իթմիշ վէ իթմէքտէ օլան պիր զաթտըր: Ժամհարեանցըն գաթիլի օլան Դրօշակիւթլէր այնը խաթալը պիր տահա իշլէմէյէճէքլէր իտի:

—Իզմիրտէ թէվգըթաթ վէ եօգլամալար տէվամ իթմէքտէ տիր:

—Խուսուսի պիր մէքթուպա պինաէն, Գաիսէրիտէ տախի պիր ճամի հաւալա անլթըլ վէ միւլթէճասըրլարը կէօյա էրմէնի իմիշլէր:

Ճամիլէրէ գարըն պու հաւաաիւթէր թաատիգ օլընալար տախի միւլթէճասըրլարը էրմէնի օլաւալար: զիրա պիզիմ միւլթէտաշլար ումումէն տինէ վէ մէզհպէ վէ ըրգա թօգանմայը վաշիւլիք ատտ իտէրէք, մէպտէն գարըն տըրլար: Հէր հալտէ պու խապասէթ թիւրք հիւքիւմէթին էլի իլէ գուրուլմուշ պիր տուղագ օլաճագ տըրքի՝ պու պէհանէ իլէ եէնի գըրկընլար թէրթիպ իթսին:

—Մաքէթսինիա մալիյէսինին գօնթօրը իշխան Ալմանիա տախի քէնտի թարաթընտան Մ. Կրիզինկիրի մէմուլ թային իթմիշ տիր:

—Պագալով նամ պուլիար Բոււլարտան Բոււլ օլմագ իշխան տաւլէթնամէ գապուլ իթմիշ, ֆագաթ էհէմմիլէթ վէրմէմիշ օլմասընտան տօլայը՝ Բամա քէօյէ կիտէր իքէն՝ պիր Բոււլ չէթաւընտան գաթլ օլընմըշ տըր:

—Աւտրիա վէ Բուսիա էլիլիլէրի Մաքէթսինիաաթի վուգուաթլարտան տօլայը Պապը Ալիյէ էէնիտէն միւրաճաաթ իթմիշլէր տիր:

—Մաքէթսինիան Գօնօնիքա քէօյիւնտէ թիւրք ասքէրլէրի պուլիար էհալիտէն 1 էրքէկ 3 գատըն վէ 4 չօնուգ գաթլ ու ճէրհ իթմիշլէր: Ասքէրլէր գօմիթա չէթասը իլէ վուրուշմագտա իքէն գազանէ վաւրուլտուլար տիյօրլար: Էհալի իսէ գօմիթա պուլընմաւըղը հալտէ ասքէրլէր գատտէն էհալի իւզէրինէ անլէլ իտէրէք անլէրի վուրուլար տէյօր:

—Սօնտէֆա Եէմէն իշխան եօլա չըգմըշ օլան 3500 թիւրք ասքէրլէրի հօտէյտայա եէթիշմիշլէր:

—Եէմէնտէն թիւրք մէնպաւարընտան տըրնան հալաաիսլէր ինկիլիլէրտէն տախի թաստիգ օլընմայա պաշկարըլար: Արապ ասըլարը պիր գաշ միւլաաթէմէլէրտէ մաղլուպ օլարագ կէրի չէքիւմիշլէր: ասքէրլէր իլէրի եիւրիւմէքտէ օլուպ, շուկիւնլէրտէ Սանաա շէհրինի աալի ասըլարըն էլինտէն ալմայա մուլաֆագ օլաճագլար զանն օլընըյօր:

Տ Ա Խ Ի Լ Ի Է

Իլան օլընտըղը իւզըն, բաղար կիւնիւ շէհրիմիլ պէլէտիլէ ինթիսապը իճրա օլընտը: Սթանպօլիսթ օլան հիւքիւմէթէ գարըն տիկէր 4—5 բարթիլէր պիրլէշմիշ օլարագ, ֆիթուաթը կէօթիւրտիլէր: Եանի հիւքիւմէթ բարթիլանլարը զայպ իթտիլէր:

—Բէզա մէքթէպ հոգաբարձուլարը՝ ինթիսապը օլ կիւնիւ իճրա օլընուպ, պիզիմ մէքթէպ իշխան էվլէլէր նօմէրօմըղտու կէօթէրտիմիլիլ զաթլար գազանտըլար 85—90 սէս: Դրօշակեան չօնուգլարըն լիսթասը իլք ազաւտան վէ կիճէ էվլէրէ տաղըլմըշ իքէն եալընը 35 սէստէ գալմըշ տըր:

Բ Ո Ւ Ս Ի Ա

Իլէթէրհօլտան (Բոււլ) կազէթաթընա իշար օլընտըղընա պինաէն, սուլհ իմիտլէրի պօշա չըգմըշլար: Ձար գօնթ Լամըստօրթը հուզուրընա գապուլինտէ տէմիշ տիր: Թագմիւնաթը հարպիլէ իշխան 1 րուպլի տախի էօտէմէյէճէյիմ, քէզա պիր ալուճ թօթրագ ճաթօնա թէրք իթմէյէճէկիմ:

—Բուս զապթիէ նէզարէթի պիր պէյաննամէ նէշրի իլէ, Սօսիալիսթ-Դէմօկրատլարըն վէ իշխանին հարէքէթլէրի աալարշիւթիլիք տէրէճէլէրինէ կէլմիշ օլտըղըն վէ օնլարըն քէօյլէրէ սիլահ տաղըլթմըշ օլտուգլարըն վէ իճրա իթտիլէրի միւրաթէլէր կէօթէրէք չէտիտ թէտպիրլէր իթթիսապ իտիլէճէկիլի իլիթար իթմիշ տիր: Բօլիսիանըն էլտէ իթտիլի տէլիլէրտէն անլաշըրտըղը իւզըն, իլիթիւրալարըն ասըլ մէքէգի Բիկա չէհրինտէ իմիշ:

—Ամբրիկա Բէյիսի Մ. Բուլգվէլթ պիր մէքթուպտա տէմիշ տիր: Բուսլար մաղլուպ օլտըգլարըն ունուլթմամալը տըրլար: վէ զալիպ օլան ճաթօնըն մէսարիլիլի էօտէմէկէ մէճպուր տըրլար: Մ. Բուլգվէլթին պու էֆքեալը Բէթերպուրլտա վէ Բէթէրհօլտա ֆէնա թէհսիր հասըլ իթմիշ օլուպ, զայըր Բուսլար Բուլգվէլթ ճաթօնա թարաֆտարըղը իտէյօր տէյօրլար:

Կ Ի Ր Ի Տ

Ատանըն թէսքիւնի գան տէօքիւմէքսիլի միւլքին օլաւայաճաղընա իթալիա տէվլէթի գաաաթ հասըլ իթմիշ օլմաղլէ, քէնտի վաթօրլարըն Կիրիտ սուլարընտան կէրի չէքմիշ: Կիրիտի Եունանիստան իլէ պիրլէշտիւմէք ֆիքըրի իլէ իթալիա տիկէր տէվլէթլէրի գօնֆէրանսա տալէթ իթմէք էֆքեալընտա օլուպ, պու խուսուստա խարիճիլէ նաղըրը Մ. Թիթօնի Պրանսա իսէ մուխապէրէ իթմիշ տիր: Պագաթ անլընա ճէվապլարա պինաէն, Բուս—ճաթօն մէսէլէսի խիթամ պուլմագսըղըն Կիրիտ իշխան պիր գարար վէրիլմէյէճէք տիր:

ԱԶԴ

Աղջկանց կրթարանն իր տասներորդ տարեշրջանը կսկի օգոստոս 29 երկուշաբթի օրն:

Կրթարանն իր ծանօթ հոգաճուլեանէն Էւ տոնմային դաստիարակութիւնէն զաա ալ տարի ուսումնական աւելի լուրջ Էւ աւելի որոշ ծրագիր մը պատրաստ ունի իրեն համար:

Ընդունելութեան պայմաններուն վրայ պէտք եղած բանակցութիւնք կը կատարուին ամէն օր ժամը 9—12:

Տնօրէնութիւն

«Աղջկանց կրթարան» Ի վառնա Պ. Ճիյիւնեան

ԹԻԻՃՃԱՐԻՑԷ

ՎԱՌՆԱ, օգոստոս 17
ՋԱՆԻՐԷ

ՊՈՒՂՏԱՅ			
Վալիօն	54—60 լիպ.	9.40 / 10. 40	
Արապա	52—62 լիպ.	7.90 / 11. 10	
ԱՐՔԱ			
Վալիօն 100 քիւ	հիւն	11. / 11. 20	
Արապա	էէնի 42—47 լիպ.	5. 80 / 6. 30	
ԵՈՒԼԱՅ	արապա 33/36 լպ.	4. / 4. 20	
Վալիօն 100 քիւ	էրլօ	9.40/10. 20	
ՅԱՍՈՒԼԵԱ	100 քիւ	21—24	
ՌԱԲԻՑԱ	100 »	19. 20 19.60	
Արապա	100 քիւ	16—18	
ՏԱՐ արապա	հէքթ.	հօգ	
ԳՕԼՕՁ	արապա 55—60 լպ.	10.40/11.20	
ՄԻՍԻՐ	57—58 լպ.	հօգ	
»	100 քիւ	11.20— 11. 90	
ՋԱՎՏԱՐ	արապա	7.70/ 8.	
»	100 քիւ	10. 80 / 11. 20	
Կիւնտէ 4—5	վալիօն վէ	450—500	
արապա կէլմէքտէ, վալիօն մուլմէլէսի նաթօլէօն 20 ֆր. արապա մուլմէլէօն նաթօլէօն 20.			
ՍԱՐԱՅԻՑԷ			
նաթօլէօն 20, 20 ֆրանք			
Օսմ. լիւրաք	22, 75 անլթըն ֆրանք		
ՊԱՐԱԼԻՑԷ			
վարնա քիւրաթընտա պագալիլէ մալլէրին պու կիւնքի ֆիլպթը, անլթըն ֆրանք իլէ:			
ԳԱՀՎԷ		2.10/ 2.20	
Շէֆէր նէմցէ		78	
Շէֆէր քէմէլ սանտըր		37. 50	
Բիլիւնճ	ճէնօվա չուվալը	42	
»	ճաթօն »	34 .	
»	Ինկիլիլ »	28.	
Բիզօն	»	49.	
ԿԱՉ Սանտըր		11. 60	
Ջէթիւն Էաղըլ քիւ		95.—1	
ԳՈՒՐՈՒ Էաղըլ		25	

Одговорились А. Курбетиянъ
печатица Д. Тодоровъ и С-но—Варна